ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հոկտեմբերի 2021 թվականի N 2090

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 50/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏԱՂԱՎԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՏԱՂԱՎԱՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արեն Վլադիմիրի Հակոբյանի 15.06.2021թ. թիվ 02/8495 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՄԱՐԳԻՍ ԹԱՄՐԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորչի փողոց թիվ 50/10 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 5.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 4.60քմ) տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 86.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Փոխել Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորչի փողոց թիվ 50/10 հասցեում գտնվող 0.00862հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված տաղավարի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ

համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված տաղավարի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին տաղավարը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
6. Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորչի փողոց թիվ 50/10 հասցեում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ք. Վանաձոր, Գ. Լուսավորչի փողոց, թիվ 50/10 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 08
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Տաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հոկտեմբերի 2021 թվականի N 2091

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՓԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԱՐԵՆԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԱՐՓԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԱՐԵՆԻ» 2021 թվականի հոկտեմբերի 06-ի թիվ 01/14189 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ *որոշում եմ.*

1.Թավարարել Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոցի թիվ 4-2 հասցեում գործող /հաշվառման հասցե՝ ք. Վանաձոր, Աղայան փող., թիվ 59/4-16/ անհատ ձեռնարկատեր «ԱՐՓԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԱՐԵՆԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 08
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հոկտեմբերի 2021 թվականի N 2092

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԻՐԻՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԳԵՆԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԻՐԻՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԳԵՆԻ» 2021 թվականի հոկտեմբերի 06-ի թիվ 01/14187 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ *որոշում եմ.*

1.Բավարարել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 98ա հասցեում գործող /հաշվառման հասցե՝ ք. Վանաձոր, Լազյան փող., թիվ 24/28/ անհատ ձեռնարկատեր «ԻՐԻՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՉԳԵՆԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 08
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2021 թվականի N 2093

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 53/57 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1910431 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Լուսավորիչի փողոց թիվ 53/57 հասցեում գտնվող, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 20.5քմ մակերեսով բնակելի գործառնական նշանակությամբ ավտոտնակը:
2. Փոխել Վանաձոր քաղաքի Լուսավորիչի փողոց թիվ 53/57 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 0.002հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային տոհմաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբրոյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
Ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2021 թվականի N 2094

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՓՈՂ ԹԻՎ 10Դ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ֆրունզե Ռաֆիկի Մարգարյանի դիմումը, անշարժ գույքի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 25.09.2021թ. անշարժ գույքի աճուրդով առուվաճառքի թիվ 3431 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ: 775-20210924-2-5406073), անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1880471 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Վերածննդի փող թիվ 10դ հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վերածննդի փողոց, 10/5 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Տարբ 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2021 թվականի Ն 2095

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25 ՀՈՒՆԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 145 ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ԵՎ 22 ՀՈՒԼԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 181 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարինե Շավարշի Սիմոնյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 25 հունիսի 2021 թվականի թիվ 145 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք), 22 հուլիսի 2021 թվականի թիվ 181 շինարարության թույլտվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16082021-06-0025 վկայականը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 25 հունիսի 2021 թվականի թիվ 145 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) և 22 հուլիսի 2021 թվականի թիվ 181 շինարարության թույլտվության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 25 հունիսի 2021 թվականի թիվ 145 նախագծման թույլտվության մեջ (ճարտարապետահատակագծային առաջադրանք) «Փիրուզ Մարգարյան Մյասնիկյան 1-ին փակ. 11 տուն» բառերը փոխարինել «Նարինե Շավարշի Սիմոնյան Տերյան փողոց թիվ 14/6» բառերով:

2. Վանաձոր համայնքի ղեկավարի 22 հուլիսի 2021 թվականի թիվ 181 շինարարության թույլտվության մեջ «Փիրուզ Մկրտչի Մարգարյանին Մյասնիկյան 1 փակ. թիվ 11» բառերը փոխարինել «Նարինե Շավարշի Սիմոնյանին Տերյան փողոց թիվ 14/6» բառերով:

3. Վանաձոր համայնքի ղեկավարի 22 հուլիսի 2021 թվականի թիվ 181 շինարարության թույլտվության մեջ «10082018-06-0042» թվերը փոխարինել «16082021-06-0025» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Տաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2021 թվականի N 2096

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ (ՆԱԽԿԻՆ ՍՎԵՐԴԼՈՎԻ) ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 23 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՔՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Սերյոժայի Քոսյանի (ծնված՝ 28.12.1961թ.) լիազորված անձ Մարինե Մանվելի Ռուշանյանի (ծնված 24.08.1984թ.) դիմումը, 17.06.2021թ. թիվ 24 ԱԱ 4087179 (նոտարական ակտի կոդ՝ 763-20210617-205-5176677) լիազորագիրը, 27.03.1984թ.տրված գույքային թերթը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և մասնագիտական եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 17.09.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-129/ 21 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլովի) փողոց 4-րդ փակուղի թիվ 23 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 173.5քմ և կից 36.73քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 335.57քմ, որից 63.75քմ և 177.54քմ մակերեսով հողամասերը հանդիսանում են ընդհանուր օգտագործման հողամասեր երկու տնատիրությունների՝ Սուսաննա Սերյոժայի Քոսյանի և Հերիքնազ Պայլանի, Ալլա Նիկողոսյանի միջև: 14.07քմ մակերեսով ճանապարհը գտնվում է ընդհանուր օգտագործման տակ երեք տնատիրությունների միջև: Սուսաննա Սերյոժայի Քոսյանի բաժնեմասը կազմում է 210.23քմ (335.57-63.75 :2-177.54:2-14.07:3): Անհատական բնակելի տունը կառուցվել է 1953-1990թթ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Սուսաննա Սերյոժայի Քոսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլովի) փողոց 4-րդ փակուղի թիվ 23 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 173.5քմ մակերեսով հողամասին կից 36.73քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 335.57քմ, որից 63.75քմ և 177.54քմ մակերեսով հողամասերը հանդիսանում են ընդհանուր օգտագործման հողամասեր երկու տնատիրությունների՝ Սուսաննա Սերյոժայի Քոսյանի և Հերիքնազ Պալյանի, Ալլա Նիկողոսյանի միջև: 14.07քմ մակերեսով ճանապարհը գտնվում է ընդհանուր օգտագործման տակ երեք տնատիրությունների միջև: Սուսաննա Սերյոժայի Քոսյանի բաժնեմասը կազմում է 210.23քմ (335.57-63.75 :2-177.54:2-14.07:3):

2. Ճանաչել Սուսաննա Սերյոժայի Քոսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլովի) փողոց 4-րդ փակուղի թիվ 23 հասցեի 210.23քմ (335.57-63.75 :2-177.54:2-14.07:3) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Նարեկացու (նախկին Սվերդլովի) փողոց 4-րդ փակուղի թիվ 23 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր,Գ. Նարեկացու փողոց, 4-րդ փակուղի, թիվ 23/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2021 թվականի N 2097

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՎԱՆԱՁՈՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ ԴՈՒՍՏՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Դավիթ Գասպարյանի 13.09.2021թ. թիվ 02/11.12/6619-21 գրությունը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1742558 վկայականը, 27.02.2020թ. գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-27022020-06-0085 որոշումը, ԿԱՐԵՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

Հաստատել Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 17 հասցեում գտնվող «Ախտահանման կենտրոն» ՓԲԸ-ի «Վանաձորի կանխարգելիչ ախտահանում դուստր» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող մասնաշենքի զբաղեցրած 0.0286հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն ԿԱՐԵՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծի:

Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 526.4քմ, որից 282.5քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր օգտագործման հողամաս «Ախտահանման կենտրոն» ՓԲԸ-ի և «Վանաձորի կանխարգելիչ ախտահանում դուստր» ՓԲԸ-ի միջև, իսկ 243.7քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն որից «Ախտահանման կենտրոն» ՓԲԸ-ի բաժնեմասը կազմում է 275.25/463.62x243.75=144.71քմ: «Ախտահանման կենտրոն» ՓԲԸ-ի բաժնեմասը 286.0քմ (282.5/2+144.71) մակերեսով հողամասն է:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2021 թվականի N 2098

«ՎԱՆՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի արձանագրության և զեկուցագրի հիման վրա 2021 թվականի սեպտեմբերի 28-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.
2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.
Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 28.09.2021 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ «ՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Վանաձոր քաղաքի Վարդանանց 114-2 հասցեի հյուսիսային հատվածում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցվել է ինքնակամ շինություն:
2021 թվականի սեպտեմբերի 28-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի հոկտեմբերի 01-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել է «ՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Տիգրան Բաղրամյանը (հիմք՝ 01.10.2021թ. ստացված փոստային անդորրագիր):
Վարչական վարույթի լսումների ընթացքում «ՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Տիգրան Բաղրամյանն ընդունել է իր կողմից վարչական իրավախախտում կատարելու փաստը:
3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ուղղված հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված

իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի մրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ տահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության տահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154-րդ, 219[1]-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ՎԱՆՇԻՆ» տահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. «ՎԱՆՇԻՆ» ՍՊԸ-ին՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարման ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2021 թվականի N 2099

«Վ.ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՍՊԸ-ԻՆ ԹԻՎ 5Ա ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒՄ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի 24.09.2021թ. թիվ Փ-4-5ᵘ/24-09-21 արձանագրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և ՀՀ կառավարության 16.08.2001թ. թիվ 762 որոշմամբ հաստատված կարգի 69-րդ և 71-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

Թույլատրել «Վ.ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՍՊԸ-ին թիվ 5ᵘ միկրոավտոբուսային երթուղում շահագործվող Գազ-322132 մակնիշի, 35 ZF 324 պետհամարանիշի, դեղին հիմնագույնի համարանիշ՝ 0516 L, միկրոավտոբուսը փոխարինելու Գազ 32213 մակնիշի, 37 DU 713 պետհամարանիշի միկրոավտոբուսով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2021 թվականի N 2100

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 50/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՏԱՂԱՎԱՐԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ՉԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԵՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արեն Վլադիմիրի Հակոբյանի 15.06.2021թ. թիվ 02/8495 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11102021-06-0038 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ կետի բ) ենթակետով, 34-րդ, 34.2-րդ կետերով, 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ *որոշում եմ.*

1. Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորչի փողոց, թիվ 50/10 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 5.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 4.60քմ) տաղավարը 18855 (տասնութ հազար ութ հարյուր հիսունհինգ) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 86.23քմ մակերեսով հողամասը, որից 10.0քմ մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ 248.886 (երկու հարյուր քառասուն ութ հազար ութ հարյուր ութսունվեց) դրամով, իսկ 76.23քմ (86.23քմ-10.0քմ) մակերեսով հողամասը կադաստրային արժեքի եռապատիկի չափով՝ 5691774 (հինգ միլիոն վեց հարյուր իննսունմեկ հազար յոթ հարյուր յոթանասունչորս) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արեն Վլադիմիրի Հակոբյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արեն Վլադիմիրի Հակոբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել տաղավարի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2021 թվականի N 2101

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ.ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 52 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՅՐԱՆ ՀԱՅԿԻ ՂԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Հայկի Ղամբարյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 643106 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ *որոշում եմ.*

Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորիչ փողոցի թիվ 52 հասցեում գտնվող Սեյրան Հայկի Ղամբարյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Գ.Լուսավորչի փողոց, 52/33 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2021 թվականի N 2102

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ (ՆԱԽԿԻՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ) ՓՈՂՈՑ ԹԻՎ 80 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐՈՒԺԱՆ ՎԱԶԳԵՆԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մերուժան Վազգենի Ներսիսյանի (ծնված՝ 04.01.1956թ.) լիազորված անձ Էդգար Սեյրանի Սարիբեկյանի (ծնված 07.11.1982թ.) դիմումը, 17.08.2021թ. թիվ 4208 (նոտարական ակտի կոդ՝ 763-20210817-90-5315561) լիազորագիրը, 20.06.1991թ. տրված տեխնիկական անձնագիրը, 03.06.1999թ.ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի թիվ 2/94 վճիռը, ՏԱՐՈՆ ՍԵՐՈԲՅԱՆ ՀԵՆՐԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և մասնագիտական եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 04.10.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-135/ 21 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հատցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Վարդանանց (նախկին Շահումյան) փողոց թիվ 80 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 445.0քմ և կից 26.1քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների ծառայման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1940-1994թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 471.1քմ: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Մերուժան Վազգենի Ներսիսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Վարդանանց (նախկին Շահումյան) փողոց թիվ 80 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 445.0քմ մակերեսով հողամասին կից 26.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Մերուժան Վազգենի Ներսիսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Վարդանանց (նախկին Շահումյան) փողոց թիվ 80 հասցեում գտնվող 471.1քմ (445.0+26.1) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Վարդանանց (նախկին Շահումյան) փողոց թիվ 80 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, թիվ 80/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՍԻՍ ԱԼԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2021 թվականի N 2103

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 42 ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼՈՒՄ ԳԵՎՈՐԳ ՄԱՆՎԵԼԻ ԱՍԼԻԿՅԱՆԻ ԵՎ ՆԱԻՐԱ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ (ԲՆԱԿԱՐԱՆԸ) ԵՎ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 42 ՇԵՆՔԻ ԹԻՎ 33 ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Մանվելի Ասլիկյանի և Նաիրա Սուրենի Հարությունյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25082021-06-0007 վկայականը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 25.09.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-132/21 Ի եզրակացությունը, «Ջոխտ Ախպուր» համատիրության նախագահի կողմից 28.09.2021թ. տրված քաղվածքը, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 42 շենքի սեփականատերերի համաձայնությունը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ, 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի բ) և գ) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Գևորգ Մանվելի Ասլիկյանին և Նաիրա Սուրենի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 42 շենքի ծավալում 6.9քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված շինությունը (բնակարանը) և Տիգրան Մեծի պողոտա թիվ 42 շենք թիվ 33 բնակարանում կատարված թվով 1 ինքնակամ ձևափոխումը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 6.9քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված բնակարանի օրինականացման համար սահմանված վճարը՝ 52040 (հիսուներկու հազար քառասուն) դրամ և թվով 1 ինքնակամ ձևափոխման օրինականացման համար սահմանված վճարը՝ 3780 (երեք հազար յոթ հարյուր ութսուն) դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 12
ք.Վանաձոր